

Վանգուվրի մէջ արժանավայել կերպով նշուեցաւ ՀՅԴ-ի 135-ամեակը



Կարդայ էջ 6

«Հայաստան» դաշինքի վարչապետի թեկնածուն Ռուպերթ Քոչարեանն է




Մարտ 16-ին, Երեւանի մէջ տեղի ունեցած հանդիսաւոր միջոցառման ընթացքին, Հայաստանի Հանրապետութեան երկրորդ նախագահ Ռուպերթ Քոչարեան պաշտօնապէս յայտարարուեցաւ որպէս «Հայաստան» դաշինքի վարչապետի թեկնածուն: Իր ելոյթին մէջ Քոչարեան շեշտեց, որ իրենք տրամադրուած են վճռականօրէն, եւ իրենց միակ նպատակը յաղթանակն է: Ան վստահութիւն յայտնեց, որ «չարը մարմնաւորող իշխանութիւնը պիտի պարտուի»:

Յայտարարութեամբ հանդէս եկաւ նաեւ ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ եւ ԱԺ պատգամաւոր Իշխան Սաղաթէլեանը, որ տեղեկացուց, թէ Ռուպերթ Քոչարեան յառաջիկայ յունիս 7-ի խորհրդարանական ընտրութիւններուն պիտի մասնակցի «Հայաստան» դաշինքով, որուն առանցքային մաս կը կազմեն Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը եւ «Առաջ» կուսակցութիւնը: Սաղաթէլեան իր խօսքին մէջ յատուկ շեշտադրեց դաշինքի ամրութիւնը՝ նշելով, որ իրենց սխալները պայքարողի սխալներ են եւ ոչ թէ դաւաճանի կամ անտարբեր դիտորդի, քանի որ անսխալական միայն ան, որ ոչինչ կ'ընէ: Ան ընդգծեց, որ այս միաւորումը սոսկ նախընտրական համախմբում չէ, այլ Հայաստանի ճակատագրով մտահոգ ուժերու ջանքերու մէկտեղում՝ հայկական ինքնութիւնը պահելու եւ անվտանգ հայրենիք վերակերտելու նպատակով:

Անդրադառնալով ներկայիս ստեղծուած կացութեան՝ Սաղաթէլեան յայտարարեց, որ իրենց առաջարկը ոչ թէ յաւերժական պատերազմն է, այլ արժանապատիւ կայունութիւնը: Ան շեշտեց, որ իրենք չեն գար պատերազմ բերելու, այլ կու գան զայն կանխելու, երկրի տարածքային ամբողջականութիւնը պաշտպանելու եւ ինքնիշխանութիւնը վերականգնելու համար: Դաշինքը հրապարակեց նաեւ իր նախընտրական կարգախօսը՝ «Միասին կարող ենք», կոչ ուղղելով ժողովուրդին միասնաբար հեռացնելու գործող վարչախումբը եւ կառուցելու մրցունակ ու անվտանգ պետութիւն մը՝ հիմնուած ազգային արժէքներու եւ հզօր տնտեսութեան վրայ:

Յայտարարութիւն Պատմական քայլ մը՝ Թորոնթոյի հայեցի կրթութեան ապագային համար



Մեծ ուրախութեամբ կը յայտնենք, որ յաջողութեամբ ձեռք ձգեցինք 211 Consumers Road հասցէին գտնուող համալիր մը, որ պիտի փոխարինէ՝ միաժամանակ գերազանցելով ներկայիս ընթացքի դրուած Հայ երիտասարդական կեդրոնի ընդլայնումի ծրագիրը:

15,05 միլիոն տոլար արժող այս ձեռքբերումը համայնքի պատմութեան մէջ ամենամեծ տնտեսական ծրագիրն է, որ կը հանդիսանայ ազգային կրթութեան եւ համայնքային գործունէութեան երկարաժամկէտ ու կայուն աճն ու ապագան ապահովող վճռական ու ռազմավարական ներդրում մը:

Համալիրի իւրապատուկ կառուցուածքը առիթը պիտի ընծայէ նաեւ ՀՕՄ-ի ամենօրեայ վարժարանի 7-12-րդ կարգերու տեղաւորումը նոր համալիրին մէջ, մանկապարտէզի եւ նախակրթարանի բաժիններու աճին ու զարգացումին համար անհրաժեշտ տարածք ստեղծելով ներկայի երկու շէնքերուն մէջ: Տարիներէ ի վեր, տարածքի սահմանափակումներուն պատճառով բազմաթիւ հայ երեխաներ չեն կրցած ընդունուիլ համայնքի միակ ամենօրեայ վարժարանը: Այս ընդլայնումը ուղղակիօրէն կը լուծէ այդ հարցը եւ կ'ապահովէ վարժարանին կայուն ու շարունակական աճը:

Նոր նախաձեռնութեան նպաստելու համար, ACC Beyond հանգանակային արշաւը, որ սկզբնապէս մեկնարկած էինք Հայ երիտասարդական կեդրոնի ընդլայնումի աշխատանքներուն ի նպաստ, պիտի վերամեկնարկուի եւ ուղղուի այս նոր ծրագրի իրականացումին:

Այս անկիւնաքարը կը խորհրդանշէ կրթական գերազանցութեան եւ ազգային ու մշակութային ժառանգութեան պահպանումի նոր ժամանակաշրջան մը: Ժամանակակից այս համալիրը ձեռք ձգելով՝ համայնքը կ'երաշխաւորէ գանատահայութեան համար կայուն ու բարգաւաճ ապագայ մը:

Շնորհաւորութիւն թորոնթոյի համայնքին:

ՀՅԴ «Ա. Թեհիրեան» կոմիտէ

Տարածեցէք ձեր «հորիզոն»ը

BEFORE YOU REPLACE THEM REJUVENATE THEM.

Don't buy new when your hearing aids can sound new again.

- REVIVE** Deep Clean & Restore
- RENEW** Calibrate & Optimize
- REJUVENATE** Hear Like New

hearingaidsource.ca
hello@hearingaidsource.ca



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղին աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմոն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



ՀՅԴ Բիւրոյի Անդամացուցիչ Արմէն Ռուստամեան Իրաւագետ Պրիթիշ Գոլոմպիայի Անդամագային Վարչապետ Տէյվիտ Էպիի Ինտ



Հինգշաբթի, մարտ 5-ին, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան հանդիպումներ ունեցաւ Պրիթիշ Գոլոմպիայի նահանգային կառավարութեան բարձրաստիճան պատասխանատուներուն հետ՝ նահանգի մայրաքաղաք Վիքթորիա կատարած իր այցելութեան ընթացքին:

Հանդիպումները տեղի ունեցան Պրիթիշ Գոլոմպիայի խորհրդարանի շէնքին մէջ, ուր Ռուստամեան նախ հանդիպեցաւ նահանգի ուժանութի եւ կլիմայական հարցերու նախարար Ատրիան Տրեքսի եւ նահանգային Օրէնսդիր Ժողովի նախագահ Ռաճ Չուհանի հետ: Այնուհետեւ ան հանդիպում մը ունեցաւ Պրիթիշ Գոլոմպիայի վարչապետ Տէյվիտ Էպիի հետ: Ռուստամեանի կ'ընկերակցէին Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Արեւմտեան շրջանի ներկայացուցիչներ Վահէ Անտոնեան, Յակոբ Տէր Յակոբեան եւ Վաննէսա Պարտաքճեան-Յակոբեան:


Հանդիպումներուն ընթացքին Ռուստամեան նահանգային ղեկավարներուն ներկայացուց չափազանց ներկայ քաղաքական իրավիճակը, ներքին զարգացումները, ինչպէս նաեւ Հարաւային Կովկասի մէջ դոյութեան ունեցող անվտանգային եւ քաղաքական մարտահրաւէրները: Ան յատուկ անդրադարձ կատարեց Ատրպէյճանի մէջ ապօրինաբար կայանաւորուած հայ գերիներու խնդիրին, ինչպէս նաեւ Արցախի հայութեան բռնի տեղահանութենէն ետք ստեղծուած մարդասիրական ծանր հետեւանքներուն:

Ռուստամեան ընդգծեց միջազգային իրազեկութեան բարձրացման եւ աջակցութեան կարեւորութիւնը՝ յատկապէս մարդու իրաւունքներու խախտումներու եւ հայ գերիներու ազատ արձակման հարցերու վերաբերեալ:

Քննարկումները անցան բաց եւ կառուցողական մթնոլորտի մէջ: Կողմերը փոխանակեցին տեսակէտներ այն մասին, թէ ինչպէս ժողովրդավարական գործընկերները եւ հաստատութիւնները, ներառեալ Գանատայի եւ Պրիթիշ Գոլոմպիայի մէջ, կրնան նպաստել միջազգային ջանքերուն՝ բարձրացնելու իրազեկութիւնը, արձագանգելու մարդասիրական խնդիրներուն եւ աջակցելու Հայաստանի ու հայ ժողովուրդին: Ռուստամեան իր երախտագիտութիւնը յայտնեց նահանգային ղեկավարութեան՝ հայ համայնքի մտահոգութիւնները լսելու եւ Հայաստանի ու հայութեան առջեւ կանգնած խնդիրներուն շուրջ բովանդակային երկխօսութիւն ունենալու պատրաստակամութեան համար:

Վիքթորիա կատարուած այս այցելութիւնը մաս կը կազմէր Ռուստամեանի Պրիթիշ Գոլոմպիա կատարած այցելութեան, որուն ընթացքին ան հանդիպումներ ունեցաւ նաեւ տեղական հայ համայնքային կազմակերպութիւններու եւ պետական տարբեր պատասխանատուներու հետ:

Լաւալի մէջ գտնուող Հայոց Յեղասպանութեան յուշարձանի շրջակայ այգին վերանուանուեցաւ «Յոյսի այգի»



Լաւալի մէջ գտնուող Հայոց Յեղասպանութեան յուշարձանի շրջակայ այգին պաշտօնապէս վերանուանուեցաւ «Յոյսի այգի» (parc de l'Espoir): Վերանուանումը կատարուեցաւ Հայոց Յեղասպանութեան յիշատակի ոգեկոչման ծիրէն ներս՝ շէնքերու վայրէջքի մէջ գտնուող Հայոց Յեղասպանութեան զոհերուն նուիրուած յուշարձանին նշանակութիւնը:

Լաւալի քաղաքապետական խորհուրդի հայազգի անդամ Սեդա Թոփուզեան յայտնեց, որ այս քայլը մեծ նշանակութիւն ունի Լաւալի Հայ համայնքին համար եւ կը մարմնաւորէ համայնքին հանդէպ համերաշխութեան, ինչպէս նաեւ խաղաղութեան եւ արդարութեան արժէքներուն նկատմամբ հաւատարմութիւնը:

Թոփուզեան նաեւ շնորհակալութիւն յայտնեց իր գործընկերներուն եւ Լաւալ քաղաքի վարչակազմին՝ նախաձեռնութեան իրականացման համար ցուցաբերուած համագործակցութեան եւ կատարուած աշխատանքին համար: Սոյն աշխատանքին մէջ առաջատար դեր ունեցած է նաեւ Լաւալի Հայ Դատի յանձնախումբը:

Խմբագրական Յանուն գալիք սերունդներու յարատեւութեան

Շնորհիւ ՀՅԴ «Սողոմոն Թեհլիրեան» կոմիտէի անխոնջ եւ հետեւողական ջանքերուն, Թորոնթոյի Հայ համայնքը այսօր կը թեւակոխէ որակական նոր ժամանակաշրջան մը, որ պիտի դրոշմէ թորոնթոյեան հաւաքական կեանքի յառաջիկայ տասնամեակներու ընթացքը: 211 Consumers Road հասցէի վիթխարի համալիրին ձեռքբերումը պարզապէս տարածքային ընդլայնում մը չէ, այլ կազմակերպական կամքի եւ ռազմավարական հեռատեսութեան գլխաւոր վկայութիւն: Այս քայլով, Թորոնթոյի հայութիւնը կը հաստատէ իր վճռակալութիւնը՝ դուրս գալու ներկայի սահմանափակումներէն եւ կերտելու ինքնաբաւ ու հզօր ապագայ մը:

Այս նախաձեռնութեան առանցքը կը կազմէ հեռահար ու հաշուարկուած հեռատեսութիւն մը: 15,05 միլիոն տոլարի այս պատմական ներդրումը համայնքի տնտեսական ու կազմակերպական հասունութեան լաւագոյն դրսեւորումն է: Այնտեղ, ուր կամքէ անկախ սահմանափակումները սկսած էին արգելակել համայնքի կրթական գործունէութեան աճը, Թեհլիրեան կոմիտէն դիմեց համարձակ ու անկիւնադարձային քայլի մը՝ գիտակցելով, որ յարատեւութիւնը կը պահանջէ ոչ միայն տեսլական, այլ նաեւ խիզախ ու յանդուգն յանձնառութիւն եւ պատասխանատուութիւն:

Այս նոր համալիրը կոչուած է դառնալու ազգային ինքնութեան պահպանման արդիական միջնաբերդը: Կրթական օժանդակութեան վերակազմաւորումն ու գիտականօրէն հիմնաւորուած բաշխումը լոկ ենթակառուցային փոփոխութիւններ չեն, այլ որակական վերելքի պարտադիր նախապայմաններ: Ստեղծելով զարգացման լայն հորիզոններ թէ՛ ուսանողական սերունդին եւ թէ՛ համայնքային կառույցներուն համար, կոմիտէի որոշումը կոչուած է զօրացնելու համայնքի դիմադրողականութիւնը ուժացման վտանգներուն դէմ եւ բարձրացնելու անոր հաւաքական կենսունակութեան նշանը:

Այս հանգրուանին, ACC Beyond հանգանակային արշաւի վերամեկնարկը կը ստանայ նոր իմաստ ու պատմական խորք: Անիկա հրաւէր մըն է իւրաքանչիւր հայորդիի՝ դառնալու այս տեսլականի համահեղինակն ու զօրակիցը: Մեր այսօրուան զոհողութիւնն ու նիւթաբարոյական նուիրատուութիւնը պիտի ըլլան այն անասան հիմքերը, որոնք վրայ պիտի բարգաւաճի վաղուան գիտակից, կազմակերպուած ու հզօր սերունդը:

Այս որոշումը կամքի յաղթանակն է ժամանակի մարտահրաւէրներուն նկատմամբ: Ասիկա Թորոնթոյի հայութեան վճռական ուժն է՝ մնալու միշտ յառաջդէմ, միշտ աճող եւ հաւատարիմ իր ազգային վեհ առաքելութեան:

Յարատեւ վերելք թորոնթոյեան հայութեան եւ համայն գանատահայութեան:

ՀՅԴ Բիւրոյի Անդամացուցիչ Արմէն Ռուստամեան այցելեց Սենթ Քաթրինգ եւ Համիլթոն



ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան, որ փետրուար 26-էն ի վեր կը գտնուի Գանատա՝ մասնակցելու Հայ Յեղափոխական Դաշնակցութեան 135-ամեակի տօնակատարութիւններուն, շաբաթ, փետրուար 28-ին, այցելեց Սենթ Քաթրինգ եւ Համիլթոն:

Ռուստամեան, ՀՅԴ Բիւրոյի անդամ Ռաֆֆի Տօնապետեանի, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Տրմիթեանի եւ Կեդրոնական կոմիտէի անդամ Դրօ Թասլաքեանի ընկերակցութեամբ, Սենթ Քաթրինգի մէջ դիմաւորուեցաւ ՀՅԴ «Անդրանիկ» կոմիտէի ներկայացուցիչներուն կողմէ, իսկ Համիլթոնի մէջ՝ ՀՅԴ «Վռամեան» կոմիտէի անդամներուն կողմէ:

Այցելութիւններուն ընթացքին Ռուստամեան մօտէն ծանօթացաւ երկու շրջաններու կազմակերպական կեանքին, գործունէութեան եւ առաքելութեան: Ան նաեւ առիթ ունեցաւ ծանօթանալու այդ շրջաններու հարուստ պատմութեան եւ կուսակցական ու միութենական կառույցներու անցեալին, որոնք հիմնուած են 20-րդ դարու առաջին տասնամեակին:

Այցելութեան ընթացքին ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը նաեւ առիթ ունեցաւ ծանօթանալու աւելի քան հարիւր տարուան արխիւային արժէքաւոր փաստաթուղթերու, որոնք կը վկայեն Գանատայի մէջ ՀՅԴ կազմակերպական ներկայութեան սկզբնական շրջանին մասին:

Ռուստամեան նաեւ զեկոյց ներկայացուց տեղական ներկայացուցիչներուն՝ Հայաստանի մէջ եւ անոր շուրջ ընթացող զարգացումներուն, ինչպէս նաեւ Դաշնակցութեան դերակատարութեան եւ դիրքորոշումներուն մասին, յատկապէս յառաջիկայ յունիս 7-ի խորհրդարանական ընտրութիւններուն ընդառաջ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔԾԵԱՆ ԿԱՄ ՎԱՐԺԵՑՈՒՄ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ (Սփիւռքեան մտածողութիւն մը)

Ինքնութիւն...

2) ա.- Քիւրքեան իր «Շողանկա-րումներ / Սփիւռքի Առաջին Սերունդէն» (հատոր՝ «Սփիւռք եւ Ինքնացում») վերլուծումի մեկնակէտին, նախքան «որբանոցային շրջանին էջերուն իր ընթերցումը, քանի մը էջեր յատկացուցած է Համաստեղի: Եւ կատարած սա հաստատումը, թէ անոր գրականութիւնը «ներկայի եւ առհասարակ ժամանակի տիրապետութիւն է. գրողական արարքը իրեն համար շղագարային անդիտակցութեանն անդին՝ սեփական արարքի, սեփական Վայրի ու սեփական օրէնքի խոր ու պայծառ գիտակցութիւն ու գիտակցի ինքնասահմանում է: Կեանքին առջեւ ու մահունն առջեւ ինքնաշնչում է»: Ասոր, ուրեմն, հետեւած է որբաշխարհի «օրբան»ին (Սուրիա, Լիբանան) մէջ՝ որբանոցային լեզուագրկումի իր քննութիւնը: Յետ այնու, անցած է Փարիզի տղոցմէ ոմանց հոգեկազմին քննութեան: Թէ ինչո՞ւ: Որովհետեւ զանոնք ճանչցած է նախ սփիւռքահայութեան «իրական եւ մտաւոր գոյգ աշխարհներու հանդիպում»ին դէմքեր, ապա նաեւ՝ որպէս հեղինակներ, որոնք ազդեցութիւն գործեցին սփիւռքահայ գիտակցութեան վրայ, թէ՛ ժխտական, եւ թէ՛ դրական առումներով:

Յետ Համաստեղին, ուրեմն, ընթերցած է նախ «որբանոցային շրջանի» էջեր: Սփիւռքի սկզբնաւորութեան, ցրուեալ հայութեան «կարեւոր մաս»ը բաղկացած էր որբերէ եւ այրիներէ, ինչպէս նշուեցաւ: Որբաշխարհի գիր մը, որ էջեր յաւակներ գրականութիւն ըլլալ (թէեւ ոմանց մօտ կար այն յաւակնութիւնը), իր փորձառութիւնը կը դնէր պարբերականներու մէջ: Այն փորձառութիւնը կը պատմէր հոգեկազմ մը:

Տեսած է, թէ 1925-ի որբերը լուծ են «հիմնական դէպք»ին՝ եղեռնի խոցին եւ իրենց կրած «ահաւոր ցնցում»ին մասին: Ենթադրած է, թէ թեթեւօրէն զգալի «գրաքննութիւն» մը՝ «ուղեղալուացքի ձեւին տակ» ճնշած է անոնց արտայայտութիւններուն վրայ, եւ արգիլած «լեզուի մակարդակին հասցնելու» հիմնական, մահաշուք ու մահացու» իրենց փորձառութեան «բառի վերածումը»: Գրաքննութեան իր ենթադրութեամբ՝ ո՛չ թէ բառին ծանօթ կիրարկումը հասկցած է, այլ միսինտարական «երկարաշունչ դաստիարակութեան» ազդեցութիւնը: Այն դաստիարակութիւնը խեղդած է զոհներուն «սարսափի ճիւղը» եւ բողոքը: Ինեղումը՝ համրացուցած է գիրենք, ենթարկած մտաւոր մահուն: Այսպէս՝ անոնցմէ խլուած է գիրենք «կեանքին կապող հիմնական իմաստը», որ է իրենց անիրաւուածութեան իրողութիւնը, պիտի աւելցնէի՝ այն իրողութեան ճանաչումը եւ բարբառումը: Հետեւա՞նքը: Պարապ մը: Եւ ձգտումը այն պարապը լեցնելու «կեղծ, անվաւեր, գաղափարաբանական տուեալներ»ով:

Առաջին տուեալը որ սեւեռած է՝ անոնց ձգտումն է երկնային գուլթ աղերսելու իրենց վիճակին համար: Գուլթ՝ որովհետեւ դժբախտ են, տկար, անմեղուկ, խեղճ, անգիտակցի, անմեղ, հրեշտակային, միամիտ, հրեշտակատիպ, առանձին, անտէր, անպաշտպան եւ այլն: Որակականներ՝ որոնք «ահաւոր կրաւորականութիւն» մը կը պատմեն:

Երկրորդ տուեալը՝ «երախտագիտութեան բեռին տակ» ինքնաշխարհախումբի պէտքը: Բոլոր որբերը՝ արեւմտեան նպաստամատոյց միախոնարները պիտի համարէին «ճշմարիտ ծնողներ»: Մինչ անոնք՝ «իրաւագրկուած ժողովուրդի մը մնացորդացը» ուղեղալուացումի պիտի ենթարկէին՝ Ս. Գրային «Ոսկեղէն համար»ներ սորվեցնելով, խեղճերուն օգնութեան դասեր տալով, եւ թերեւս առանց գիտաւորութեան՝ զայն պիտի դաստիարակէին «կասկածելիօրէն աշխարհաբա-

ղաքացիական ոգիով», որ անոր մէջ կը խեղդէր «մահուան աչքերուն նայելու նուագագոյն կարողութիւնը, եւ գրական-մշակութային արտադրութեան թէ կեանքի մէջ, կարելիութիւնը՝ օր մը զանցելու այդ մահը»: Քիւրքեան ինքնաշխարհախումբի պէտքին առնչած է մնացորդացին ներկայէն փախուստը՝ «կեղծ-վիպական բնութեանապաշտութեան մը ուղղուածութեամբ», կամ՝ նախա-եղեռնեան անցեալի իտէլականացումին: Այս «կեղծ-վիպական»ութիւնը՝ գաղափարաբանական կեղծիք մըն էր: Որբանոցային սերունդը «այնքան քիչ» սորված էր «իր պարապը, իր մահը խօսքի վերածելու»: Այն սերունդը պիտի ըլլար լեզուագրկուած, որ «անհետեւանք» պիտի չանցնէր:

Որբանոցային սերունդին «գաղափարաբանութիւն»ը՝ Սփիւռքի ծագման «օրբան»ին գաղափարներու աշխարհն էր:

Փարիզի տղոցմէ առաջին դէմքը, որ քննած է, Վազգէն Շուշանեանն է: Ասոր յատկացուցած իր էջերուն վերնագիրն է. «Վազգէն Շուշանեան Կամ Ծայրագոյն Պառակտումը»: Քիւրքեան յետ գրութեամբ մը՝ ընդունելով հանդերձ հրապարակագիր-գաղափարախօս Շուշանեանի դրական յատկութիւնները, զայն հոգեբանութեան «հարկատու» չէ համարած, որովհետեւ հրապարակագրութիւն-գաղափարախօսութիւնը կը զանցեն «հոգեբանական դաշտը գրողին», եւ կ'ըլլան «անդր-հոգեբանական դաշտի մը մէջ»: Մինչդեռ գրականութեան Շուշանեանը մնացած է ենթակայ իր «հոգեբանական սարք»ին:

Որպէս հոգեբանութիւն՝ ան «էպպէս պառակտուած մարդն է, բնախօսական-յուզական իմաստով՝ խախուտ հաւասարակուծութեան վրայ կառուցուած հոգեկազմ: Հոգեկազմ՝ որ բացայայտ տրամադրութիւններ ցոյց կու տայ երկճղու, երկհերձուելու»: Ան հայապահպան բարոյականէն կ'անցնի սեռահար արտաւորի դիրքին: Սեռային բնագոյն օտարումը՝ շեշտուած է Շուշանեանի մօտ: Ուրիշին (ոչ միայն օտարին, այլեւ՝ որեւէ անհատի) հանդէպ բնականոն կեցուածք որդեգրելու անաստակութիւն մըն այ իրն է եղած: Շուշանեան մնացած է անկարողութեան մէջ նոր կեանք մը ստեղծելու:

Քիւրքեան անդրադարձած է անոր գրականութեան «մօտա» դառնալուն՝ 50-ական եւ 60-ական թուականներու միջին-արեւելեան սերունդին համար: Եւ այս երեւոյթին համար պատասխանատու ցոյց տուած էր ոչ թէ Շուշանեանը, այլ «գրոց-բրոց տղաքը»: Այս վերջինները, գրողին էջերուն մէջ իրենց հոգեկանին պատկերը գտած էին:

Ըստ իրեն, Շուշանեանի պարագան՝ «ծայրագոյն շեշտումն է»՝ Շաւարշ Նարեկունի, Շահան Շահնուր, Հրաչ Զարդարեան, եւ «նուազ չափով մը»՝ Զարեհ Որբունի «գաղափարաբանական» պարագաներուն:

Երկրորդ դէմքը՝ Շաւարշ Նարեկունին է: Ասոր մասին գրութիւնը՝ Քիւրքեան խորագրած է «Շ. Նարեկունի՝ Բացարձակ Մեթոմը Ներկային»:

Մինչ գաղափարախօս հրապարակագիր Շուշանեանը «պայծառ ներկայութիւն» բնորոշած է, Նարեկունի հրապարակագրին մասին իր կարծիքը այնքան ալ դրական չէ:

Անցնելով Նարեկունիի գրական էջերուն, գրած է, թէ անոնց մէջէն «կարմիր թելի պէս» կ'անցնի գիծը ներկային բացարձակ մերժման, նաեւ կարելի է աւելցնել՝ տարաշխարհին կամ Սփիւռքին մերժման: Ան ընկղմած է նախա-եղեռնեան «դրախտի հեշտանքներուն մէջ»: Նարեկունի չէ կրցած զանցել այս հոգեբանութիւնը: Եւ դարձած է «ակնառու դէմքը» արեւմտեան Սփիւռքի որբաշխարհին, «ոգին ու մղիչը Չափահաս Որբերու շար-

ժումին»: Իր ցաւը՝ «Գլխագիր Որբութեան ցաւ»ն է: Որմէ այն բոլոր արտայայտութիւնները՝ որոնք արտանշաններ են սեռային գրկախտի, եւ զգացական ու մտաւոր հաշմունքներու: Ներառեալ վախը՝ օտարին, ուրիշին, տարբերին: Բայց անոր վախը՝ միայն «ազգային» իմաստով օտարին, ուրիշին, տարբերին վախը չէ. նաեւ վախն է ներկային ու վայրին մէջ սեփական ժառանգութիւնը եւ ինքնութիւնը ստանձնելու:

Նարեկեան աշխարհը եւս մշակութային-հոգեբանական «պատուաստումով» մը՝ անցած է յաջորդ սերունդին: Իր օրինակը՝ ամբողջ սերունդի մը ողբերգութեան օրինակն է: Այն նոյն սերունդին՝ որ հմայուած էր Շուշանեանի գրական էջերով:

Երրորդ դէմքը՝ Շահան Շահնուրն է: Յօդուածին տիտղոսը՝ «Շահան Շահնուր»:

Քիւրքեան Շահնուրի գործը հակադրաբար Շուշանեանի եւ Նարեկունիի գործերուն՝ արժանի գտած է «բանական խօսք» բնորոշելու: Խօսք՝ որ կազմակերպ է ու յստակ. որ արտաքին աշխարհին հետ «մնայուն ու հաւասարակչու յարաբերութիւն կը մշակէ»: Անկէ կ'օգտագործէ «բազմաթիւ տարբեր», ժամանակի բոլոր հարցերուն հանդէպ իր կեցուածքը կ'արտայայտէ, այլ խօսքով՝ իր աշխարհը «ներկայութիւն» մըն է, եւ ոչ՝ բացակայութիւն. ան ներկայ է իր ժամանակին գիտակցութեամբ եւ ստանձնումով: Անոր խօսքը՝ «մինչեւ բաւական հեռուները կը պահէ պայծառաստեղութիւն, ինքնագիտակցութիւն»:

Այսքան գրականութեամբ հանդերձ՝ ան չի կրնար Օտարին եւ Սփիւռքի օտարութեան հետ «բնականոն յարաբերութիւն մը» ապահովել: Եւ ասիկա կու գայ ազգայինի իր ընկալումէն: Ազգայինը մահուան ստուերին բնակիչն է: Եւ քանի իր իսկութիւնը ազգային է, ապա մահուան ցանկութիւնը կը տիրէ իր միջնորդարին վրայ: Այսուհանդերձ, ան հրաշքի մը ցանկութեանն է չհրաժարած. համբարձման հրաշքի մը ցանկութեանն է: Ուստի՝ այն հրաշքին յոյս մը կը սնուցանէ: Յրանսագիր Շահնուրը՝ Արմէն Լիւպին մահուան ստուերէն դուրս գալու փորձ մըն է: Թէեւ այն փորձը մահուան ստուերին մէջ, սակայն պիտի յաջողէր գինք մօտեցնել «անյուսօրէն անմատչելի» ազատութեան: Ու ինք պիտի ըլլար որպէս ազատ եւ անազատ, մինչեւ հասնիլը «Ազատն Կոմիտաս»ի «գմբէթաբար»ին: Կոմիտաս վարդապետն է ազատութեան եւ ազատութիւնն իսկ է: Վախճանը ամուլութեան եւ կրաւորականութեան: Ստեղծագործ անհատը կրնայ առանց օտարումի շարժիլ «հանճարայտուկ հեշտութեամբ»: Ահա անհատական եւ միաժամանակ հաւաքական համբարձման գիւտը: Շահնուրի այս եզրայանգումը, ըստ իս, գինք կը մօտեցնէ որբունիական եւ սարաֆեանական դրականութեան:

Չորրորդ դէմքը՝ Հրաչ Զարդարեանն է: «Պահ մը», արագ պահ մը միայն յամեցած է այս գրողին վրայ: Յամեցումին վերնագիրը՝ «Հ. Զարդարեան» է: Անոր մասին եզրակացուցած է. «Մոռալ, յուսալքիչ, հեղձուցիչ ոլորտ է Հ. Զարդարեանի աշխարհը, իր կերպարներուն աշխարհը...»:

Հինգրորդ դէմքը՝ Զարեհ Որբունին է: Որբունին նուիրած է երեք յօդուածներ. «Զ. Որբունի՝ Լինելութեան Փորձ Մը», «Որբունի եւ Սաղմնաբանութիւն» եւ «Որբունի — Մարդուն Եղելոյթը»: Այս գրողով՝ Սփիւռքահայ գրականութիւնը կը թեւակոխէ «բառին զօրաւոր իմաստով՝ սփիւռքեան տարիքին»: Անոր գրականութիւնը «գոյութեանական իմաստով ստեղծագործ բնոյթ ունի»: Անոր գոյաստեղծական եզրը՝ իր գործը կը վերածէ

«սփիւռքեան մարդու կերտումի սպասին դրուած հսկայ տարրալուծարան մը»: Որբունի յանձնառու է թէ՛ մարդկային որակի մը ստեղծման, եւ թէ՛ հայկական նոր ինքնութեան մը ստեղծման: Իր յանձնառութիւնը՝ միայն «այս կամ այն գաղափարին կամ գաղափարաբանութեան հանդէպ դրական, կրկնողաբար ջատագովական կեցուածք» չէ, այլ գոյաստեղծական կեցուածք է, որ կեանք կը ստեղծէ: Որբունիով կը յայտնուի «Սփիւռքի նախամարդուն ինքնաստեղծման ճիգին կորագիծ»:

Վեցերորդ դէմքը՝ Նիկողոս Սարաֆեանն է, անտեսուած, բայց սփիւռքեան «վաւերական» քերթողը: Սարաֆեանի մասին Քիւրքեան վեց յօդուածներ գրած է. «Նոր Անջրպետներու Ճամբորդը՝ Ն. Սարաֆեան», «Նոր Անջրպետներու Արուեստը՝ Զգայութիւն եւ Փոխաբերութիւն», «Ազգային Ինքնութեան Ծագումը՝ Տարաշխարհի Հորիզոնին. Ն. Սարաֆեան ՏԱՄՆԶՈՐՍԻ Ընդմէջէն», «Տեղատուութիւնը՝ Ինքնացման Գործոն Ընթացիկի Գազաթնակէտին», «ՄԻՋԵՐԱԲԵՐԴ Ժողովածուն» եւ «ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ»:

Քիւրքեանի համար՝ Սարաֆեան «ստեղծագործ հայեցիութեան մը թելադրանքը» կը բերէ: Այս «թելադրանք»ը՝ փոխան պատգամի, որ «գաղափարաբանական» է, եւ մեր մօտ «հայապահպանման ամուլութիւն»ը եւ «սնանկութիւն»ը կը յուշէ: Սարաֆեանի գրականութիւնը Տարաշխարհը ունի «իբր իրական, դրական ներկայութիւն»ի ժամանակ ու վայր: Գրողը չի մերժեր մեր պատմա-մշակութային անցեալը կամ անցեալի Աւանդը, այլ զայն կ'ընդունի իբր «բազմապիւղիչ էպոս» վասն նոր ինքնութեան: Պատմա-մշակութային անցեալը կամ Աւանդը սակայն՝ չեն կրնար ըլլալ յենակէտ. յենակէտը՝ անմիջական տարաշխարհն է, տուեալը տարաշխարհին:

Սարաֆեանի հոգե-լեզուական ճամբորդութիւնը՝ «գոյաստեղծման ձեռնարկութիւն» է: Ան մահուան գիտակցութիւնը զանցած է, եւ ինքզինք հասցուցած Գոյին մէջ բնակութեան, որ կեանքին ստեղծումն է այսօր ու այստեղ: Իր ճամբորդութիւնը անհատին իմաստանցումն է այժմէական լոյսի ճամբուն մէջ: Տարաշխարհի ինքնութիւնը կերտելի, կազմաւորելի է անհատին իմաստանցմամբ: Իմաստանցում մը՝ որ անդր-բարոյական պայծառացում է, «չարժման նոր տարազ», որ տրամախոհական զանցումով՝ կը մաքրէ ինքզինք մահուան բոլոր ստուերներէն, ինքզինք կ'ազատէ արցունքի հովիտէն, ինքզինք գողգոթայական պատկերով ճանչնալէ, եւ կը կանգնի իբր պատմական ենթակայ, գործօն եւ ոչ՝ կրաւորական օրինավիճակով:

Հոգեկազմերու քիւրքեանական քննութիւնը՝ սփիւռքեան ինքնութեան հորովոյթի ուրուագծում մըն է: Ուրուագծումը երկարած է Սփիւռքի Ա. հանգրուանէն մինչեւ Բ. հանգրուանի աւարտը. արտաբանականէն մինչեւ արտազերծ հանգրուանը, կամ արտազերծ լինելակերպի ստիպողութեան հանգրուանը: Համաստեղ նախօրինակն է այն լինելակերպին, իսկ Սարաֆեան՝ տեսանողը: «Շողանկարումներ»ու առաջին դէմքին եւ վերջին դէմքին ոգեկանութիւնները գիրար կը գրկեն:

Այստեղ կարեւոր է նշել, որ Քիւրքեանի արտագնիչ ընթերցումին նպատակը ո՛չ հոգեբուժական, եւ ոչ ալ՝ դատապարտողական եղած է, այլ՝ պարզապէս ունեցած իրերուն հոյովոյթը իրենց ընթացքին մէջ ներկայացնելու, եւ Գլխագիր Մահը յաղթահարելու, եւ նորոգուելու թելադրանք մը փոխանցելու ցանկութիւն:

ԳԱՌՆԻԿ Ա. Բ. Գ. (Շարունակելի 4)



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Թ. ՏԱՐԻ ԹԻՎ 4, Մարտ 2026



ՈՒՐ ՓՆՏՈՒՆԸ ՃՇՄԱՐԻՏ ԱՂԲԻՒՐԸ ՋՈՒՐԻՆ

«Ով որ ծարաւ է, թող Ինծի գայ եւ խմէ» (Յովկ. 7.37)

Յովհաննէս առաքեալ կը նկարագրէ թէ ինչպէս տօնի վերջին օրը, որ տաղաարահարաց տօնն էր, Քրիստոս ոտքի կը կանգնի եւ բարձրաձայն կ'աղաղակէ « ծարաւ է, թող Ինծի գայ եւ խմէ», եւ բոլոր ինծի հաւատացողները պիտի տեսնեն թէ իրենց «սրտէն կենդանի ջուրի գետեր պիտի թլիխին»: Այս բառերը Քրիստոսի շրթներէն արտասանուած բառեր են, եւ սակայն կարելի է հասկնալ միայն այն ատեն երբ անոր նախորդող պատմական ենթահողը ըմբռնենք: Յստակ է որ մեծ տօն էր եւ ամէն կողմերէն մարդիկ եկած էին, մանաւանդ քահանաներ, փարիսեցիներ եւ դպիրներ: Անոնք ծիսական արարողութիւններ կը կատարէին, կ'աղօթէին եւ Սելովամի աազանէն ջուր կը կրէին ի յիշատակ իրենց նախահայրերուն, երբ անոնք վրանի տակ կ'ապրէին եւ Աստուած իր հոգատարութիւնը կը տածէր: Այսպիսի տօնական մթնոլորտին մէջ է որ Յիսուս վերջին օրը կուգայ անոնց ըսելու, թէ չի բաւեր միայն ծիսական արարողութիւններ ընել, սովորական ջուր կրել եւ միայն մարմինը յագեցնել: Քրիստոս կուգայ ըսելու, որ ճշմարիտ ջուրի փնտռուող պէտք է կատարէք, մանաւանդ ձեր հոգիի ծարաւը յագեցնելու: Այստեղ է որ հաստատ կը բարձրաձայնէ, որ ճշմարիտ ջուրի, կեանք տուող ջուրի աղբիւրը Ինքն է, ինծի եկէք կ'ըսէ եւ ձեր ծարաւը պիտի յագեցնէք:

Ծարաւի զգացումը բնական երեւոյթ է, ով չէ ունեցած ծարաւի զգացում: Եթէ ջուրի ծարաւ ունինք ջուր պիտի խմենք, պիտի երթանք աղբիւր, ծորակը բանանք եւ ջուր ըմպենք մեր ծարաւը յագեցնելու համար: Եթէ գիտութեան ծարաւ ունինք, բնականօրէն պիտի ուսանինք, հարստանանք գիտութեամբ, մեր ծարաւը յագեցնելու եւ մեր կեանքը առաջնորդելու յաջողութեամբ: Եթէ խաղաղութեան ծարաւ ունինք, պիտի ապրինք այնպէս, որ խաղաղութիւն հաստատենք մեր շուրջը, ոչ սովորական, ոչ ձեւական, այլ էական, սկզբունքային, ամբողջական եւ ճշմարիտ խաղաղութիւնը: Եթէ յոյսի ծարաւ ունինք պիտի դառնանք Աստուծոյ խօսքին, Աւետարանին յոյսով լեցուցելու եւ յուսադրուելու ու վաղուան նայելու: Եթէ սիրոյ ծարաւ ունինք, բնականօրէն պիտի սիրենք եւ սէր տածենք մեր շրջապատին:

Այս բոլորէն անդին սակայն եթէ ծարաւ ունինք հոգետր սնունդի, բնականօրէն մեր հայեացքը պիտի դարձնենք առ Աստուած եւ Ինք կրնայ ամբողջապէս սնուցանել եւ մեր հոգիի սովը ճշմարտապէս յագեցնել: Այո, մենք պէտք ունինք իրական հոգետր սնունդի, ոչ սոսկ խօսքի, այլ իրական, ճշմարիտ, կենդանի հացի: Ինչպէս երբ Քրիստոս հինգ հազար հոգիներ կերակրեց մեծագոյն իրաջքով, մարդիկ սկսան զինք փնտռել ոչ թէ իր խօսքը լսելու, այլ որովհետեւ կերան եւ կշտացան այն հացէն, որ տրուեցաւ իրենց: Ի պատասխան այս երեւոյթին Քրիստոս կուգայ ըսելու որ ես եմ կենդանի հացը, ինծի եկէք, ես եմ կենդանի ջուրը, աղբիւրը կենսատու ջուրի, ինծի եկէք եւ ձեր անօթութիւնը եւ ծարաւը յափտենապէս կը յագեցնէք: Եթէ ծարաւ ենք միայն Իրեն պիտի երթանք: Այսօր մեր ծարաւը կը յագեցնենք միայն Տիրոջ Խօսքը լսելով, իսկ Տիրոջ խօսքի տունը, կենսատու ջուրի աղբիւրը եկեղեցին է, այնտեղ կը յագեցնենք մեր հոգետր սնունդի ծարաւը: Երբ եկեղեցի կուգանք, միաթարութեան ծարաւը ունինք կը միաթարուինք: Երբ սիրոյ ծարաւ ունինք, եկեղեցի կուգանք, Աստուածային սիրոյ զեղումով մենք մեզ կը զօրացնենք, հաւատքով կ'ամրապնդուինք եւ մեր կեանքը կը շարունակենք՝ յանուն Աստուծոյ, հաւատարիմ մնալով մեր եկեղեցոյ աւանդութիւններուն, սկզբունքներուն եւ մեր ազգի արժէքներուն ու սրբութիւններուն: Այսօր եկեղեցին է որ մեզ կը համախմբէ, կ'ուղղորդէ մեզ աղբիւրին երթալու մեր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Պահքը ոչ միայն եկեղեցական օրացոյցին մէջ սահմանուած սովորութիւն մըն է, այլեւ մեր եկեղեցոյ հայրերուն կողմէն հաստատուած հոգետր ճանապարհորդութիւն մը, որ մարդը կ'առաջնորդէ դէպի իր ներաշխարհը եւ դէպի իր Արարիչը՝ Աստուած: Ինչ է եւ ինչո՞ւ կարեւոր է պահքը:

Պահքը ինքնաքննութեան, ինքնաճանաչման, ապաշխարութեան եւ վերականգնումի շրջան մըն է:

Պահեցողութեան ընթացքին մենք զմեզ կը քննենք, մեր սխալները կը ճանչնանք եւ այդ ձեւով կը սկսինք մենք զմեզ ճանչնալ: Ո՞վ եմ ես: Ինչպիսի՞ կեանք մը կ'ապրիմ: Արդեօք քրիստոնէական վայելի է իմ ապրելակերպս: Երբ կը սկսինք այս հարցումներու պատասխանները գտնել, այն ատեն կը սկսինք հասկնալ մենք զմեզ: Մենք զմեզ հասկնալով կ'անցնինք ապաշխարութեան հանգրուանը, որ մարդկային կեանքի մէկ մասնիկն է:

Ապաշխարութիւնը կեանքի մէջ մէկ անգամ չի պատահիր: Մարդկային կեանքը ապաշխարութեան շրջան է, որովհետեւ բնութեամբ տկար արարածներ ենք եւ մեղանշական բնութեան տէր ըլլալով անպայման կը սխալինք: Այդ իսկ պատճառով ապաշխարութիւնը կը սկսի այն վայրկեանին, որ կ'ուզենք մեր ընթացքը փոխել եւ կը վերջանայ այն վայրկեանին երբ կը հեռանանք անցաւոր այս կեանքէն:

Ապաշխարութեամբ մեղանշական կեանքէն կ'անցնինք դէպի քրիստոնէական կեանք: Չղջումով կը փորձենք մաքրել մեր ախտերը: Ամէն ինչ որ կը կործանի պէտք է վերականգնի:

Մեր սխալներուն ու մեղքերուն պատճառով կործանած մեր անձերը կը վերականգնին միայն ու միայն անցնելով վերոնշեալ հանգրուաններէն:

- † Ինքնաքննութիւն,
- † Ինքնաճանաչում,
- † Ապաշխարութիւն,
- † Վերականգնում:

«Պահեցողութիւնը մեր բարկութիւնը զսպելն է, հեզութեան ճամբան ընտրելն է, մաքրութեւ ուղիղ սիրոյ ունենալն է, մեզմէ վախ մտածումներն ու փափքները հեռացնելն է, բարեգործութեան կեանք մը ապրիլն է» կ'ըսէ Մեծ Բարսեղ Հայրապետ:

Երբ կը զսպենք մեր մարմինը, կը սորվինք նաեւ զսպել մեր բարկութիւնը եւ մեր հպարտութիւնը: Այսպէս, պահեցողութիւնը կը դառնայ հոգետր այն դաստիարակը, որ կը մաքրէ մեր ներսիդին եւ կը նորոգէ մեր ամբողջ էութիւնը:

Պահքի ընթացքին աղօթքով առաւել եւս կը մօտենանք մեր Արարիչին: Իսկ Արարիչին մօտենալ կը նշանակէ հեռանալ մեղքէն ու չարիքէն: Չղջումով եւ խոնարհութեամբ մարդ կը ձգտի վերագտնել այն խաղաղութիւնը, զոր մեղքը խլած էր իրմէ: Պահքը մեզի կու տայ առիթը՝ դադարելու առօրեայի աղմուկէն եւ վերագտնելու մեր կորսուած ներքին ներդաշնակութիւնը:

Ղուկասու Աւետարանի (15-րդ գլուխ 11-32) մէջ, Քրիստոս մեզի կը պատմէ անառակ որդիի առակը: Անառակ որդին իւրաքանչիւր ենք, որ մեր փորձութիւններու պատճառով կը մեղանշենք եւ կը հեռանանք Աստուծմէ, բայց միշտ վերադարձի ճամբան կը փորձենք գտնել: Անառակ որդիին նման, մենք կը վերադառնանք մեր Հօր տունը: Ինչպէս Աւետարանական դրուագին մէջ հայրը գրկաբաց կ'ընդունի իր գաւակը, նոյնպէս Աստուած միշտ պատրաստ է ներելու: Մենք յաճախ կը սխալինք, կը մեղանշենք եւ կը հեռանանք Աստուծմէ, սակայն Աստուած մէկ քայլ աւելի կը մօտենայ մեզի՝ մեզ մեր անկեալ վիճակէն դուրս հանելու համար:

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Ով որ իր անձը կը բարձրացնէ՝ պիտի խոնարհի, եւ ով որ իր անձը խոնարհեցնէ՝ պիտի բարձրանայ» (Ղուկաս 18.14):

“ For those who make themselves great will be humbled, and those who humble themselves will be made great.” (Luke 18.14)





Ի՞նչ Կ'ըսեն ՍՈՒՐԲ ՀԱՅՐԵՐԸ ՊԱՀԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Խիստ պահեցողության շնորհի էր որ մեծն Դանիել առիծներու ժանիքներէն փրկուեցաւ. վայրագ գազանն անգամ չհամարձակեցաւ պահեցողի սուրբ մարմինն մօտենալ. գազաններուն արգիլուեցաւ պահեցողին սուրբ մարմինն մօտենալ, որովհետեւ սուրբը չմօտեցաւ թագաւորին պիղծ զոհերով աղտոտած սեղանին:

Նոյն այդ խիստ պահեցողության շնորհի էր որ երեք երիտասարդները ազատեցան բոցավառ կրակէն եւ մարեցին իրենց մէջ կերակուրներու մոլութեան կիրքը եւ բաւարարուեցան քիչ մը ոսպով. մարեցին հնոցէն բարձրացող ահեղ կրակը, որովհետեւ ներսը զով ցօղ մը կը մխիթարէր պահեցողները...:

Նոյն այդ խիստ պահեցողության շնորհի էր որ Նինուէացիներու բազմամարդ քաղաքը փրկուեցաւ, որովհետեւ իրենց բոլոր անօրէնութիւններէն եւ չար վարքերէն դարձի եկան, քուրճով եւ մոխիրով մեղմացուցին Աստուծոյ սաստիկ բարկութիւնը, եւ որովհետեւ անոնք իրենց անձերը պահքի եւ պաղատանքի, ողբի եւ հեծեծալից արտասուքներու ենթարկեցին, Աստուած ալ խնայեց իրենց հոգիներն ու մարմինները:

Նոյն այդ խիստ պահեցողության շնորհի էր որ Մովսէս աստուածադիր օրէնքները ստացաւ, որովհետեւ Քառասնօրեայ Պահեցողության մաքրութեամբ արժանի եղաւ Մաքուրին մերձենալու եւ բարեկամի մը նման բերան բերանի խօսելու Աստուծոյ հետ:

Նոյն այդ խիստ պահեցողության շնորհի էր որ Եղիա Թերաքացին սրբուեցաւ եւ իր մէկ խօսքով կրցաւ երկինքի դռները բանալ եւ գոցել եւ երկրի վրայ կրակ տեղացնել:

ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

ՔՐԻՍՏՈՍ ԳԻՏԷՆ ՄԵՐ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՆ

Չափահաս էր Պետրոս առաքեալ, երբ Տէրը խօսեցաւ անոր՝ իր երիտասարդութեան անցած տարիներուն մասին ու գալիք ծերութեան տարիներուն մասին (Յհ21.18): Եւ հոսկէ կը սորվինք, որ Յիսուս կը ճանչնայ մեր անցեալը ու գիտէ մեր ապագան, եւ սա մեզ պէտք է ապահովութեան զգացումով լեցնէ: Տէրը ամէն բան գիտէ մեր մասին, ւստի պէտք է ամէն վախ ու մտահոգութիւն հեռանայ մեզմէ, եւ լեցունք խաղաղութեամբ:

Տէրը կը ճանչնայ մեր մեղքերը, բայց փառք իրեն, որ կը ճանչնայ նաեւ՝ մեղքէն ձերբազատելու մեր սրտի փափաքը: Տէրը նկատի պիտի չառնէ մեր մեղքերը, եթէ մեր սիրտերը կը մերժեն զանոնք:

Տէրը կը ճանչնայ մեր տկարութիւնները, բայց մեզ չի դատապարտեր անոնց համար, այլ ընդհակառակը, կ'օգնէ մեզի ձերբազատելու անոնցմէ:

Քրիստոս պատրաստ է մաքրելու մեզ մեր անցեալի մեղքերէն, պաշտպանելու մեզ մեր ներկայի մեղքերուն դէմ, եւ պահպանելու մեզ ապագայի մեղքերուն դէմ, բայց որպէսզի այս բոլորը կատարէ, պէտք է զինք հոչակենք Տէրը մեր կեանքին, Փրկիչը մեր անձերուն, բնակիչը մեր սիրտերուն:

Քրիստոս յաւիտենական Տէր է. յաւիտենականութիւնը չունի անցեալ, ներկայ կամ ապագայ. մնայուն Ներկան է ան. եւ իբր այդպիսին, ան իր եռքին մէջ բռնած ունի մեր անցեալը, ներկան ու ապագան: Մեր անցեալը անցեալ չէ, եւ ոչ ալ մեր ապագան՝ ապագայ, քանի անոնք մշտապէս ՆԵՐԿԱՅ եղողին ձեռքին մէջ են:

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԵԾՈՒԹԻՒՆԸ
Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան

ԽՆԴՐԱՆՔՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՂՕԹՔ

Ո՛վ կեանքի յոյս, աղօթքները ընդունող, մեղքերը քառող եւ խնդրանքները կատարող մեր Աստուածը՝ Քրիստոս. ընդունէ մեր պաղատանքը ամէն ժամանակ, Սուրբ Աստուածածինն եւ բոլոր սուրբերուն բարեխօսութեամբ: Լսէ մեզ, Տէր, եւ ողորմէ: Ներէ մեզի, քաւէ եւ արձակէ մեր մեղքերը: Արժանի ըրէ գոհութեամբ փառաւորելու քեզ՝ Հօր եւ Միածին Որդիին հետ միասին. այժմ եւ յաւիտեան:

ԱՄԷՆ:

ԱՄԷՆՕՐԵԱՅ ԱՂՕԹՔ

Բարերար Տէր, ողորմութեամբդ նայէ քեզի երկրպագողիս եւ քու սուրբ անունդ փառաբանողիս:

Տէր զօրութեան, հանդարտեցրո՛ր հոգիս սատանայական բոլոր խռովութիւններէն ու աշխարհիկ հոգերէն:

Առաքէ քու խղաղութեան հրեշտակդ, որ զիս անխռով պահէ գիշեր ու ցերեկ, քնացած թէ արթուն եղած ատենս, որպէսզի միշտ գոհութեամբ փառաւորեմ քեզ:

ԱՄԷՆ:

ԸԼԼԱԼ ՄԵՐ ԶԱԻԱԿՆԵՐՈՒՆ ԲԱՐԵԿԱՄԸ

Կրնան արդեօք հայրերն ու մայրերը իրենց զաւակներուն բարեկամը ըլլալ: Շատ են այն զաւակները, որոնք ազատութիւն փնտռելով՝ կը հեռանան ծնողներէն եւ հազուադէպ կը վերադառնան: Անոնք վերստին տուն գալու պարագային, անգամ մը եւս մանուկ կը զգան իրենք զիրենք եւ չեն ուզեր երկար մնալ:

Անոնց բացակայութեան, բնականաբար ծնողները լրջօրէն կը մտահոգուին, եւ երբ անոնք այցելութեան գան, կը փափաքին անգամ մըն ալ հոգատար ըլլալ: Թէեւ յաճախ չի պատահիր, որ ծնողները իբրեւ քոյր ու եղբայր վարուին իրենց երկսեռ զաւակներուն հետ, բայց երբ պատահի, այնքան հոգեպարար կ'ըլլայ տեսնել անոնց փոխարարութիւնը, որքան ծագումն արշալոյսին:

ՀԱԻԱՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՄ

Քննող զաղտնեաց, մեղայ քեզ կամաւ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ. թողութիւն շնորհեա՛ մեղաւորիս, զի ի ծննդէն աւազանին մինչեւ ցայսօր մեղուցեալ եմ առաջին աստուածութեանդ քո՝ զգայարանօք իմովք եւ ամենայն անդամօք մարմնոյս. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:

Գաղտնիքները քննող, մեղանչեցի քեզի դէմ կամաւորաբար եւ ակամայ, գիտակցաբար եւ անգիտակցաբար, թողութիւն շնորհէ՛ մեղաւորիս, որովհետեւ սուրբ Աւագանի ծնունդէն մինչեւ այսօր մեղանչած եմ Աստուածութեանդ դէմ՝ իմ զգայարանքներովս եւ մարմնիս բոլոր անդամներովը. եւ ողորմէ՛ քու արարածներուդ եւ ինձի՝ բազմամեղիս:

You who see all hidden things, I have sinned against you, willingly or inadvertently, knowingly or in ignorance. Grant your forgiveness to me, a sinner, for since my birth at the baptismal font, even till now, I have sinned before your divinity, with my senses & with all the members of my body & have mercy on all your creatures & on me, a grave sinner!

Toi qui sondes les secrets, contre Toi j'ai péché volontairement et involontairement, délibérément et par ignorance, accorde-moi le pardon, à moi pécheur; car depuis ma naissance à la Source sacrée jusqu'à ce jour, j'ai péché devant ta Divinité, par mes sens et par tout mon corps, et aie pitié de tes créatures et de moi, si grand pécheur.





ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ

ՔՈՒՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԿԱՄ ՀԱՒԱՏԱՑԵԼՈՑ ՊԱՏԱՐԱԳՎԵՐԱԲԵՐՈՒՄ

Սրբասացութիւնը երգուած ատեն, մինչ պատարագիչը ցած ծայնով թախանձագին կ'աղօթէ, յիշելով ինքզինք՝ (քահանայական պաշտօնին նուիրուածները) եւ անարժանաբար իրեն վատահուած քահանայութիւնը. շնորհք կը խնդրէ՝ որպէսզի արժանի ըլլայ սպասաւորելու այս ահաւոր խորհուրդին, որուն իսկական քահանայապետը՝ մատուցանողը – միաժամանակ մատչողը – զայն ընդունողն ու մեզի պարգեւողը Քրիստոս ինքն է: Եւ կը կատարուի Ընծաներու վերաբերումը:

Ի՞նչ կը նշանակէ «ՎԵՐԱԲԵՐՈՒՄ»:

Իր պարզագոյն բաղադրիչներով՝ կը նշանակէ «վեր - բերելը»: Ներկայ ժամանակներուն, պատրաստուած Ընծաները, այսինքն Հացն ու Գինին, խորանին աջակողմեան (հիւսիսակողմը) պատին գտնուող խորհրդանշան մէջ, կամ Սեղանին աջակողմը գտնուող երկրորդ Սեղանի մը վրայ դրուած կ'ըլլան: Այս հանգրուանին՝ պատարագիչին սպասարկող սարկաւազներէն մէկը զանոնք հոնկէ առնելով՝ հանդիսաւորապէս կը բարձրացնէ, եւ թափօրով խորանին ետեւէն անցնելով՝ կու գայ Սեղանին ձախակողմը (հարաւակողմը), զայն նոյն հանդիսաւորութեամբ յանձնելու համար պատարագիչին: Նախապէս պատկերը քիչ մը տարբեր էր, եւ «վերաբերում» անունը իր իսկական նշանակութիւնը ունէր:

Անցեալին Պատարագին համար ժողովուրդը իր ընծաները (=պատարագ) կը բերէր: Այս ընծաներէն հացերը առանձին ավսէներով կամ մաղձաններով, իսկ գինին յատուկ բաժակներով, հանդիսաւորապէս ժողովուրդին մէջէն այս հանգրուանին վեր՝ խորան կը բերուէին սուրբ Սեղան դրուելու համար: Եւ այս էր իսկական վերաբերումը:

Ներկայիս այս ձեւը կորսուած է, բայց խորհուրդը եւ անունը՝ պահուած: Ուստի, սուրբ Սկիհին վերաբերումը կը խորհրդանշէ հաւատացեալ ժողովուրդին նուէրներուն մատուցումը Աստուծոյ:

Վերաբերումը կատարող Սարկաւազը Ընծաները խորհրդանշան առնելէն մինչեւ հարաւակողմ հասնիլը, Սաղմոսներէն եւ Ամբակում մարգարէէն քանի մը համարներ կ'արտասանէ. այսպէս՝

- ա) Սկիհը առնելուն պէս՝ «Աստուած երկինքի մէջ բնակարան կանգնեց Արեգակին, եւ սա՛ փեսայի մը պէս իր առագաստէն դուրս կու գայ» (Սաղմոս 19.5):
- բ) Երբ արեւելեան կողմ կը հասնի՝ «Ճամբայ բացէք անոր՝ որ արեւելք կը նստի, երկինքներէն վեր» (Սաղմոս 68.33):
- գ) Իսկ հարաւակողմ կը հասնի՝ «Աստուած Հարաւէն պիտի գայ, Փռան լեռնէն պիտի գայ Սուրբը» (Ամբակում 3.3):
- դ) Հարաւակողմ հասնելէ ետք պահ մը կանգ կ'առնէ, ապա դէպի հիւսիս՝ դէպի պատարագիչը կը դառնայ, եւ անոր հետ փոխն ի փոխ կ'արտասանեն 24-րդ Սաղմոսին 7-10 համարները՝ «Համբարձէք, իշխանք, զորունս ձեր ի վեր ...», որոնք «փառաց Թագաւորին» տաճար գալուստը կը պատկերացնեն:

Ատով ըսել կ'ուզուի, թէ ահա սուրբ Սկիհին մէջ դրուած Հացին ու Գինին խորհրդական կերպարանքով խորքին մէջ ամենագոր մեր Աստուածը ինք է որ կու գայ Սեղան բազմելու, այդպիսով՝ սուրբ Սեղանը եւ մեր սրտերը իր աննիւթեղէն անճառելի փառքին հողեղէն աթոռը դարձնելով:

Այս պահէն սկսեալ՝ մեզի համար խորանը եւ սուրբ Սեղանը երկրաւոր յարկ մը չեն ներկայացներ, այլ՝ երկրի վրայ երկինքը կը պատկերացնեն, որովհետեւ երկինքներէն վեր նստող Արեգակը ինք իբրեւ թագաւոր կու գայ հոն բազմելու, իր ներկայութեամբ երկիրը երկինքի կը վերածէ եւ ամբողջ եկեղեցին իր արքայութեան կը գերափոխէ:

Բոլոր հաւատացեալները պէտք է զգան, թէ իրենց Թագաւորին, իրենց Փրկչին եւ իրենց Աստուծոյն դիմաց են հիմա: Եւ ասիկա Պատարագի այս բաժինը կազմող քարոզին, աղօթքին ու երգին մէջ կ'արտացոլան:

Սարկաւազը իր քարոզով կը յիշեցնէ՝ թէ ինչ կը պահանջուի իւրաքանչիւր հաւատացեալէ. «Հաւատքով, սրբութեամբ եւ երկիւղով աղօթքի կանգնիք Աստուծոյ այս սուրբ Սեղանին առջեւ, եւ ո՛չ թէ գայթակղալից խիղճով, նենգութեամբ ու խորամանկութեամբ, պատրանքով ու խաբէրայութեամբ, երկմտութեամբ ու թերահաւատութեամբ: Այլ՝ ուղիղ վարքով, պարզ միտքով, անկեղծ սրտով, կատարեալ հաւատքով, սիրով լեցուած եւ ամէն տեսակի բարի գործերով հարստացած աղօթքի կանգնիք Աստուծոյ այս սուրբ Սեղանին առջեւ...»:

Մինչ այդ, պատարագիչը նախ ծածուկ կերպով կ'աղօթէ, որ Աստուած մեր ձեռքէն ընդունի Սեղան դրուած այս խորհուրդը, եւ զայն իր կատարումին հասցնէ, իբրեւ խորհուրդը Միաձինին Մարմնին եւ Արեան, որոնց ճաշակումը «մեծքերու քաւութեան դեղ ըլլայ ճաշակողներու համար»: Ապա, բարձրաձայն երգով կը յայտարարէ՝ թէ ասիկա արդիւնքն է մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի շնորհքին ու մարդասիրութեան: Եւ աղօթքի աւարտին պատարագիչը կ'օրհնէ ժողովուրդը:

(Շարունակելի 9)
«ՀԱՍԿՆԱՆՔ ՄԵՐ ՊԱՏԱՐԱԳԸ»
ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ,
ԿԱՌՈՅՑԸ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ
ԶԱՐԵՎ ԱՐՔ. ԱԶՆԱՌՈՐԵԱՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԱՂՕԹ

ՅԻՍՈՒՍ ԻՆՉ ԱՂՕԹՔ ՍՈՐՎԵՑՈՒՑ ՄԵԶԻ:

Յիսուս Քրիստոսի սորվեցուցած աղօթքը Տէրունական աղօթքն է, որ հետեւեալն է. «Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո: Եկեցէ արքայութիւն քո: Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի: Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր: Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեր թողումը մերոց պարտապանաց: Եւ մի տանոր զմեզ ի փորձութիւն: Այլ փրկեա զմեզ ի չարէ. զի քո է արքայութիւն եւ զօրութիւնը եւ փառք յաւիտեանս յաւիտենից. Ամէն»: («Հայր մեր երկնաւոր, սրբաբանով անունդ. թող գայ արքայութիւնդ, թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ: Ամէնօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր: Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք գործած են: Եւ թոյլ մի՛ տար որ փորձութեամ մէջ ինչպէս. այլ մեզ չարէն ազատէ: Որովհետեւ քուկը են միշտ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը. ամէն» (Մտ 6.9-13):

ԱՅՍ ԱՂՕԹՔԻՆ ՄԵՋ ԻՆՉ ԻՆԴՐԱՆՔՆԵՐ ԿԱՆ:

- Այս աղօթքին մէջ կայ եօթը խնդրանք.-
- 1. Հայր մեր երկնաւոր, սրբաբանով անունդ,
- 2. Թող գայ արքայութիւնդ,
- 3. Թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝ այնպէս ալ երկրի վրայ,
- 4. Ամէնօրեայ մեր հացը այսօր եւս մեզի տուր,
- 5. Ներէ՛ մեր յանցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յանցանք գործած են,
- 6. Թոյլ մի՛ տար, որ փորձութեան մէջ ինչպէս:
- 7. Մեզ չարէն ազատէ: Որովհետեւ քուկը են միշտ արքայութիւնը, զօրութիւնը եւ փառքը:

ՅԻՍՈՒՍ ԱՍՏՈՒԾՄԷ ԱՌԱՒԵԼԱԲԱՐ ԻՆՉ ԻՆԴՐԵԼ ՍՈՐՎԵՑՈՒՑ:

Յիսուս ըսաւ. «Ինչպէսզէք, Աստուծոյ արքայութիւնն ու արդարութիւնը եւ մնացածը Աստուած ատելիով պիտի տայ ձեզի»:

ԵՐՔ ՊԷՏՔ Է ԱՂՕԹԵՆՔ:

Պէտք է միշտ աղօթենք, բայց մանաւանդ առտու եւ իրիկուն: Եւ մեր աղօթքը պէտք է ըլլայ շերմեռանդ:

ՔԱՆԻ ՏԵՍԱԿ ԱՂՕԹՔ ԿԱՅ:

Աղօթքի երկու ձեւ կայ, անհատական եւ հաւաքական:

ՈՐՆ Է ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ:

Անհատական աղօթքը առանձին կատարուած աղօթքն է, որ սենեակի մը մէջ կամ տեղ մը քաշուած կը կատարուի:

ՈՐՆ Է ՀԱՒԱՔԱԿԱՆ ԱՂՕԹՔԸ:

Հաւաքական աղօթքը եկեղեցիներու մէջ, հաւատացեալներուն մասնակցութեամբ կատարուած աղօթքն է:

ՅԻՍՈՒՍ ԻՆՉ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԽՐԱՏՆԵՐ ՏՈՒԱԾ Է:

- Յիսուս խրատեց, որ.-
 - 1. Ջերմեռանդօրէն սիրենք զԱստուած:
 - 2. Աստուծոյ խօսքերը արդիւնաւորենք:
 - 3. Զիրար սիրենք եւ իրարու յանցանքը ներենք:
 - 4. Օգնենք մեր ընկերներուն, երբ մեզի պէտք ունին:
 - 5. Աստուծոյ գթութեան ապաւինիք, որքան ալ մեղք գործած ըլլանք:
